ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

«29» սեպտեմբերի 2017 թվականի № 121-Ն

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 51-րդ հոդվածի, 54-րդ հոդվածի, 55-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, հիմք ընդունելով հանքավայրի շահագործման նախագծի 2017 թվականի օգոստոսի 14-ի «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության» թիվ ԲՓ 70 և 2017 թվականի հուլիսի 25-ի «Արտադրական վտանգավոր օբյեկտի նախագծային փաստաթղթերի տեխնիկական անվտանգության» թիվ 1642 փորձաքննությունների դրական եզրակացությունները, հաշվի առնելով՝ «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի 2017 թվականի սեպտեմբերի 01-ի թիվ Ֆ-258/17 գրությունը, <ԿՈՒԱՐԼԻՆԻ ՊԼՅՈՒՍ> ՍՊ ընկերության 2017 թվականի մայիսի 29-ի թիվ 5 գրությունը և Ընդերքի գործակալության պետի զեկուցագիրը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «ԿՈՒԱՐԼԻՆԻ ՊԼՅՈՒՍ» ՍՊ ընկերությանը 50 տարի ժամկետով տրամադրել օգտակար հանածոյի արդյունահանման թիվ ՇԱԹ-29/569 թույլտվությունը՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արագածի անդեզիտի հանքավայրի ընդերքի տեղամասի՝ 1.X=4454817.5 Y=8430475.5, 2. X=4454828.5 Y=8430485, 3. X=4454833 Y=8430500, 4. X=4454831 Y=8430517.5, 5.X=4454837.5 Y=8430532, 6.X=4454858,5 Y=8430537.5 7.X=4454878.5 Y=8430550, 8.X=4454887.5 Y=8430571.5, 9.X=4454956 Y=8430489, 10.X=4454876 Y=8430421.5 (տրված են WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով) կոորդինատներով եզրագծված տարածքում արդյունահանում կատարելու համար, հատկացնելով՝ 166250,0 մ^3 անդեզիտի մարվող պաշար և լեռնահատկացման թիվ L-569 լեռնահատկացման ակտը՝ 1.X=4454817.5 Y=8430475.5, H=1069 (h=-7), 2.X=4454772 Y=8430462.5, H=1066 (h=0), 3.X=4454769 Y=8430509.5, H=1053 (h=0), 4. X=4454777 Y=8430529, H=1052 (h=0), 5.X=4454810.5 Y=8430590.5, H=1040 (h=0), 6.X=4454860 Y=8430595.5, H=1054 (h=0), 7.X=4454865 Y=8430593.5 H=1056 (h=0),

8.X=4454887.5 Y=8430571.5, H=1062 (h=0), 9.X=4454956 Y=8430489, H=1084 (h=- 22), 10. X=4454876 Y=8430421.5 H=1091.5 (h=-29.5), (տրված են WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով) կոորդինատներով եզրագծված 1,92 հա տարածքով:

2.Հանքի տարեկան արտադրողականությունը սահմանել՝ 3325,0 մ^3 մարվող պաշար:

3. Ընդերքի գործակալության պետին՝

1) պատրաստել սույն հրամանի 1-ին կետում նշված՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արագածի անդեզիտի հանքավայրի ընդերքի տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ Պ-569 պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր), ծանուցել դիմումատուին՝ 5 օրվա ընթացքում ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման պետական տուրքի վճարման մասին և հրավիրել վերջինիս 10-օրյա ժամկետում պայմանագիրն իր կողմից վավերացնելու մասին.

2) ընկերության կողմից պայմանագիրը վավերացվելուց հետո, 10 օրվա ընթացքում ընկերությանը տրամադրել օգտակար հանածոների արդյունահանման իրավունքը հավաստող փաստաթղթերի փաթեթը.

3) ծանուցել ընկերությանը, որ սահմանված ժամկետներում պայմանագիրն իր կողմից չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքի փաթեթը չստանալու դեպքում, արդյունահանման իրավունք հայցելու դիմումը բավարարելու վերաբերյալ սույն հրամանը կճանաչվի ուժը կորցրած.

4) ապահովել համապատասխան գրառումների կատարումը օգտակար հանածոների արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

4. «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին – ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումը՝ Ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից եռօրյա ժամկետում:

5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

6. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել՝ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ